ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անտոնյան.

Ի պատասխան Ձեր 14.04.2021թ. գրության՝ տեղեկացվում է, որ քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունը մշտապես իրականացնում է իր համակարգմամբ գործող կազմակերպությունների ընթացիկ խնդիրների մշտադիտարկում, վերջիններից պարբերաբար ստանում է համապատասխան տեղեկատվություն, այդ թվում՝ վերանորոգման, գույքի ձեռքբերման անհրաժեշտության և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ, որոնց հիման վրա իրականացվում է համապատասխան գործընթաց:

«Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի մասնակի վերանորոգման աշխատանքների անհրաժեշտության վերաբերյալ ՀՈԱԿ-ը տեղեկացրել է 28.04.2020թ. հ.28/04 գրությամբ՝ նշելով, որ անձրևաջրերի ներթափանցման հետևանքով առաջացել են խնդիրներ և շենքի առաստաղն ունի վերանորոգման կարիք: ՀՈԱԿ-ից պահանջվել է լրացուցիչ տեղեկատվություն՝ բարձրացված խնդրի լուծման ուղղությամբ համապատասխան գործընթաց իրականացնելու նպատակով:

2021թ. աշխատանքային ծրագրերով կիրականացվեն «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի տանիքի ջերմամեկուսացման և շենքի ներքին հարդարման (կոսմետիկ վերանորոգման) աշխատանքներ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Նոր Նորք վարչական շրջանի ծրագրերով «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներ նախատեսված չեն: 2021թ. ծրագրի շրջանակներում կվերանորոգվեն Նանսենի այգու տարածքում գտնվող նստարանները, բացի «Երևան» գրվածքով նստարաններից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ